

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Սեպտեմբերի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է բարձ 2-3 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են սեպտեմբերի 1-ին, 2-ին. Տավուշում գրանցվել է +31..+33^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +30...+32^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +36...+38^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +35...+37^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +29...+31^{0}C, Շիրակում՝ +29...+34^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +29...+32^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +33...+35^{0}C, Գեղարքունիքում՝ +26...+30^{0}C, Լոռիում՝ +29...+33^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +36...+38^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +29...31^{0}C, նախալեռներում՝ +33...+37^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են սեպտեմբերի 6-ին. Շիրակում գրանցվել է +8...+10^{0}C, (Աշոցք՝ +3^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +10...+12^{0}C (Հանքավան՝ +6^{0}C), նախալեռնային շրջաններում՝ +14...+16^{0}C, Տավուշում +11...+16^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +5...+7^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +14...+16^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +14...+18^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +10...+12^{0}C (Սիսիան՝ +5^{0}C), Գեղարքունիքում՝ +7...+12^{0}C, Լոռիում՝ +7...+11^{0}C (Տաշիր՝ +5), Արմավիրում՝ +12...+17^{0}C, Արարատում՝ +14...+16^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +6...+8^{0}C, նախալեռներում՝ +13...+17^{0}C:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Լոռիում կազմել է 17-43մմ (113-391%), Շիրակում՝ 3-20մմ (38-143%), Տավուշում՝ 8-37մմ (73-247%), Գեղարքունիքում՝ 2-19մմ (20-190%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 11...13մմ (100-118%), նախալեռնային շրջաններում՝ Թալին՝ 2մմ-40%, Կոտայքի լեռնային շրջաններում՝ 1-19մմ (17-190%), նախալեռնային շրջաններում՝ 4մմ (100%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 2մմ (25%), նախալեռնային շրջաններում՝ 2մմ (50%), Արմավիրում՝ 0.2-0.5մմ (10-25%), Արարատում՝ 0.1...0.2մմ (5-10%), Սյունիքում տասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են սեպտեմբերի երկրորդ կեսին. լեռնային շրջաններում՝ +3...+8^{0}C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ +10....+15^{0}C, Մեղրիում՝ +16^{0}C:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի հասունացումը և բերքահավաքը: Դաշտերում և այգիներում իրականացվել են դաշտային աշխատանքներ:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել մշակաբեյսերի հասունացման և բերքահավաքի համար, դիտված տեղումները փոքր-ինչ բարձրացրել են հողի խոնավությունը:

Հանրապետությունում կատարվել է մշակաբույսերի մասսայական բերքահավաք:

Լեռնային շրջաններում կատարվել է աշնանացան ցորենի նախացանքային աշխատանքներ, տեղ-տեղ սկսվել է ցանքը: